

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ուղերձն ուսուցչի օրվա առթիվ

05.10.2011

Միրելի ուսուցիչներ, սրտանց շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի առթիվ: Սա այն տոնն է, որը մեզ հնարավորություն է ընձեռում գնահատանքի խոսքեր հղել և խոնարհվել ձեր վաստակի առջև:

Ինքներդ գիտեք, որ Ձեր դերն անփոխարինելի է մեր կյանքում, քանի որ Ձեզ է վերապահված սերունդներին կրթելու և հայեցի դաստիարակելու վեհ առաքելությունը: Դպրոցը՝ ի դեմս Ձեզ, տարիներ շարունակ հանդիսացել և հանդիսանում է պետության և ժողովրդի ապագան կերտող կարևորագույն օղակը:

Մենք ապրում ենք գիտելիքի և տեղեկատվության դարաշրջանում: Մեր սերունդների հետագա նվաճումները, ձեռքբերումներն ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, պայմանավորված է նրանով, թե որքանով Ձեզ կհաջողվի մեր ապագան կերտողներին տանել տեղեկատվության և գիտելիքի անսպառ հոսքին համընթաց:

Քանզի պետք է գիտակցենք, որ չունենալով ժամանակակից գիտելիքներով հարուստ և բազմակողմանի զարգացած սերունդ՝ մենք չենք կարող քաղաքակիրթ ազգերի շարքում ունենալ մեր տեղը և համարժեք արձագանքել ժամանակի մարտահրավերներին:

Կրկին շնորհավորելով բոլորիդ մեր պետական տոնացույցում ամրագրված և արդեն իսկ պետականորեն նշվող այս կարևոր տոնի առթիվ՝ ցանկանում եմ Ձեզ առողջություն, անձնական երջանկություն և աշխատանքային անսպառ եռանդ՝ Ձեր հայրենանվեր և ազգապահպան առաքելությունը շարունակելու պատվաբեր գործում:

*Մեծագույն հարգանքով՝
ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան*